դառնայ Կարապետ արեղայ Բաղիշեցիի գործին մեծութիւնը:

Հայ արուեստի պատմութեան ուսումնասիրման համար իր ուրոյն տեղը ունի Կարապետ արեղայ Բաղիշեցին, իսկ ոսկերիչներ Սքանդարն ու Շահղուբաթը իրենց արհեստով հետեւողի դեր մը կը կատարեն եւ միայն վաւերագրական տեղ մը կը գրաւեն մեզի յայտնի հին հայ ոսկերիչներու ցանկին վրայ:

Անհրաժեշտ է նկատի ունենալ որ տուեալ ժամանակաշրջանին արուեստները, եւ մասամբ նաեւ արհեստները կը զարգանային Հայկական կրօնական Հաստատութիւններու չուրջ, իրենց ուրոյն դիմագծով, վայելելով որոշ պաշտպանութիւն եւ յարաբերական ապահովութիւն:

★

Ա. կողի դիտումը մեզ կը թելադրէ հետեւեալը՝ Կարապետ արեղայ Բաղիշեցին ձգտած է Ամենակալը ցոյց տալ չորս աւետարանիչներու խորհրդանիշերուն վրայ բարձրացուած իր առաւելագոյն հեղինակութեամբ:

Եզին եւ առիւծին դէպի ձախ եւ աջ դարձած գլուխները (փոխանակ աջ եւ ձախի, ինչպէս վերոյիշեալ No. 5786 ձեռագրակազմին վրայ) թելադրուած է կեդրոնի ծագման զարդին համար անհրաժեշտ տարածութեան ստեղծման անհրաժեշտութենէն: Առաքեալներու (խնդրարկուներ) եւ Տիրամօր (Բարեխօս) դիրքաւորումները կենդրոնական մասի վրայ չարժումներու փոխ-յարաբերութեան բնագաւառին մէջ (խնդրարկուն՝ Բարեխօս) կ'ապահովեն նկարչի նպատակադրման կատարումը: Ներքեւի կիսակլոր կամարը ցոյց կու տայ ընդհանուր դասաւորման հայկական ճարտարապետութենէ թելադրուած ըլլալը:

Այս ձեռագրակազմի դասաւորումը մանրանկարչութենէ ճարտարապետութիւն հոսում մըն է, որը կրցած է արձաթագործութեան ծառայել, քանի որ մանրանկարչութեան նիւթին՝ (մագաղաթ) եւ ճարտարապետութեան նիւթին՝ (քար) միչեւ մետալի ճկունութիւնը եւ նկարչի խրայատուկ ձեւերու առկայութիւնը օժանդակած են մտայղացման յաջող կատարմանը:

Հակառակ Սքանդարի եւ Շահղուբաթի դրուագման որոշ թերութիւններուն, որոնք հասանարար աճապարանքի արդիւնք են, կարապետ արեղայ Բաղիշեցին, իր նկարչութեան կանոնաւոր եւ նպատակասլաց գծերով յաջողած է ոսկերիչներու թերութիւնները յաղթահարել եւ իր նպատակադրման հասնիլ:

ՀԱՅԿ ՏԷՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ*

3 Մարտ 1984

* Լուսանկարները եւ գծագրութիւնը Հեղ.՝ Հայկ Տէր Ղեւոնդեանի:

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ (ԼԱՏԻՆԵՐԷՆ) ՍՐԲԱԽՕՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հայաստանի և հայերի թեման իր հարուստ աւանդոյթներն ունի ֆրանսիական գրականութեան մէջ: Իր արմատներով այն սկիզբ է առնում վաղ միջնադարից ու առնչւում ազգային հերոսական էպոսին (Chanson de geste): Ֆրանսիական էպոսի գրաւոր ամենավաղ յուշարձանները ստեղծուել են 11-րդ, իսկ ամենաուշ չորսները՝ 14-րդ դարերում: 11-րդ դարը որպէս ֆրանսիական էպոսի ձևաւորման, և ընդհանրապէս՝ գրականութեան հիմնադրման ու զարգացման դարաշրջան, մի ժամանակ հանդիսանում է հայկական թեման վերջինիս մէջ ներթափանցելու սկզբնաշրջան: Մի քանի, հայկական թեմայի հետ ֆրանսիական գրականութեան ունեցած աղերսները նկատուում են էպոսի սկզբնաւորման պահից: 12-րդ դարի հետ առնչելով Հայաստանի ու հայերի մուտքը ֆրանսիական գրականութիւն, եւ նում ենք այս երևոյթի ծաւալի ու ինտենսիտետի ընթացքից, որը և հնարաւոր է դառնում, չնորհիւ ֆրանս-հայկական յարաբերութիւնների ծաւալուած պայմանաւորող պատմական որոշակի իրադրութեան: Նշենք, որ Հայաստանի ու Ֆրանսիայի միջեւ ստեղծուած կապերը դադարիլն են ունեցել և պատմական առաւել վաղ դարաշրջանում: Դրանք սկիզբ են առել Գաղղիայի, այնուհետև՝ Ֆրանկների պետութեան ժամանակաշրջանից սկսած:

Հասարակութեան զարգացման տարբեր փուլերում, պատմա-հասարակական քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրօնական ու մշակութային նախադրեալների աշխուժացումը համապատասխան, փոխուում են նաև ֆրանս-հայկական կապերի բնոյթն ու ինտենսիտետը, որոնք և ազդում են հայկական թեման ֆրանսիական գրականութիւն ներթափանցելու ողջ ընթացքի վրայ: Պատմական զարգացման ընթացքում որոշ գործօններ անտեսանելի դարձնելով մի ուրիշներին, նրանց մղել են յետին պլան, թէև յաճախ էլ՝ իրարով պայմանաւորել ու լրացրել են միմեանց: Այդպէս է եղել, օրինակ, Կիլիկեան Հայկական պետութեան ու խաչակրաց արշաւանքների չրջանում, երբ Հայաստանի ու Արևմուտքի քաղաքական ձգտումները ենթարկուում էին համընդհանուր նպատակների, երբ ուժեղ ու անկախ պետութեան՝ կիլիկեայի հետ վերջինիս ունեցած տնտեսական, կրօնական ու քաղաքական դաշինքը նպաստում էր արևմտեան նուաճողների յաջողութիւններին: Առաւել վաղ դարաշրջանում՝ վաղ միջնադարում, ֆրանս-հայկական կապերի աչխուժութեան աստիճանը հիմնականում կանխորոշուում է կրօնական ընդհանրութեան գիտակցութեամբ: Քրիստոնէական կրօնն էլ հէնց հանդիսանում է հիմնական, ելակէտային այն նախադրեալը, որն իրրև մեծաւորող դործօն պայմանաւորում է ֆրանս-հայկական գրական կապերի բնոյթը: Կրօնական գործօնը, թէև առաջնայինն ու որոշիչն էր, բայց ոչ միակը՝ այդ չրջանի ֆրանս-հայկական գրական կապերի զարգացման մէջ: Ի հարկէ, կարելի է նշել և այլ կարգի գործօնները, սակայն դրանք ոչ էական նշանակութիւն ունենալով և ակտիւ բնոյթ չկրելով, մէջդրական կապերում որոշակի դեր չէին խաղում:

Ֆրանսիական գրականութեան մէջ արտացոլուած հայկական թեմայի բնոյթն ու առանձնայատկութիւնները պայմանաւորուած էին ոչ միայն սոցիալ-տնտեսական և հասարակական-մշակութային բնոյթ կրող, այլև զուտ գրական գործօններով: Վերջին դէպքում կարևոր նշանակութիւն է ստանում գրականութիւնների զարգացման օրինաչափութիւնները ներընդունող ներգրական պրոցեսը և ազգային ազգակներն ու գրական աւանդոյթներն ընկալելու՝ նրա նախահաւատածութիւնը:

Իւրաքանչիւր դարաշրջան ներընդունելով հայկական թեմաներ, կերպարներ ու մոտիւներ, ծառայեցնում էր իր սեփական նպատակներին՝ գրանցում որոնելով ժամանակի հարցերի պատասխանները, հնօրեայ հերոսներին իրենց բնաւորութեամբ ընկալում ու վերարտադրում ժամանակաշրջանի պա-

© National Library of Armenia

հանջներից բխող պահակերացումների համաձայն:

Հայկական թեման ֆրանսիական մշակույթում նեղ-թափանցիկ նախաշերքան, զբաղուում է այդ իսկ թեմայի ոչ մեծ ընդգրկմամբ և ինչ-որ չափով՝ մեկուսմանի հնչեղութեամբ: Ուշագրաւ է, որ այդ չրջանի հայկական թեման իր արտացոլումն է գտնում յատկապէս արքեպիսկոպական դրականութեան մէջ, որ թէ՛ ձեւով և թէ՛ բովանդակութեամբ կրօնական էր, այսինքն՝ արմատաւորուելով քրիստոնէական դրականութեան մէջ, համապատասխանօրէն կրում էր վերջինիս կրօնական բնոյթը:

11–րդ դարից սկսած ընդարձակուում են հայկական թեմատիկայի գործառնական ու ժանրային սահմանները: Հայաստանի ու հայերի կերպարը տեղ է գտնում տարբեր ժանրերում՝ էպոսի, առասպելական վէպի, պատմագրութեան, առասպելների և այլոց մէջ[1]: Հայկական թեմայի լայն տարածումը 11—14–րդ դդ· ֆրանսիական մշակոյթի դրականութեան մէջ անհիմն չէր· այն նախապատրաստուած էր քաղաքական, տնտեսական, կրօնական բազմաթիւ գործօններով: Ներկայ յօդուածում մենք կը սահմանափակուենք առաջին չրջանի մանակի քննութեամբ:

Վաղ միջնադարում, քրիստոնէութեան կազմաւորման և տարածման դարաշրջանում դեղարուեստական դրականութեան դեղափոխական սկզբունքները այլևս դադարում են համապատասխանել կեանքի պահանջներին:

Պետական և հասարակական զարգացման նոր պայմանները և պրօբլեմների նոր ամբողջութիւնը փիլիսոփայական, կրօնական, բարոյախօսական դաղափարները՝ դրականութեան նոր խնդիրներ էին առաջադրում ինչպէս բովանդակութեան, այնպէս էլ ոճի բնագաւառում: Համապատասխան՝ քրիստոնէական դրականութեան պահանջ առաջացաւ, որ պէտք է նպաստէր կիսահեթանոսական եւրոպայի ազգերի կրօնաբարոյական դաստիարակութեան: Քրիստոնէական դրականութիւնը իրեն յատուկ դաւանաբանական–բարոյաուսուցողական ուղղուածութեամբ, նրպատասում էր կրօնական նոր ուսմունքի դիրքերի ամրապնդման և ապահովում նրա վերջնական յաղթանակը:

[1] Կարապետեան Գ., Հայաստանը և հայերը ֆրանսիական դրականութեան մէջ (11—14–րդ դդ·), Պատմա–բանասիրական հանդէս, 1982, 1:

Քրիստոնէական իդէալի ամենացայտուն արտայայտութիւնն ու դրսևորումը սրբաբանական դրականութիւնն է: Ըստ կլեուչեսկու՝ սրբախօսական դրականութեան յուշարձանները հանդէս են գալիս «որպէս պատմական դէմքերի և վարքագրական սխրագործութիւնների մէջ քրիստոնէական իդէալի անմիջական արտացոլման գրական մէջոց»[2]:

Միջնադարեան դրականութեան հէնց այս ժանրի մէջ լայն զարգացում ստացաւ հայկական թեման: Հայր կերպարը, որպէս սրբի, քրիստոնեայ խոստովանողի, սրբախօսի, նահատակի, տեղ է գտել սրբախօսական դրականութեան մէջ արդէն 2–րդ դարից: Սրբախօսական աւանդոյթի համաձայն սբ· Ֆիդունտիէն (Fidentius-Phidentien) պաղտւսյից (2–րդ դ·), Կոմինի (Comminium-Commines) համայնքի առաքեալ սուրբ Խրիզոլը (Chrysolius-Chryseuil) (3–րդ դ·), սուրբ Մանիկոն (Magnentius)՝ Ֆլորենցիայի համայնքի առաջնորդը, (3–րդ դ·), Տոնզրում յարգուող սուրբ Սերվատիոսը (Servatius) (4–րդ դար) ծագումով հայ էին[3]:

Կարելի է կատակածել այդ սրբախօսական յուշարձանների պատմական հաւաստիութեանը, որոնցում հայերը հանդէս են գալիս որպէս Արևմուտքում յարգուող սրբեր և յաճախ քրիստոնէական համայնքների ղեկավարներ հանդիսանում սրվդէն մեր թուարկութեան առաջին դարերից սկսած, երբ քրիստոնէութիւնը դեռևս էր իր ձևաւորման և տարածման պրոցեսում: Կրօնական համայնքների մասնակիցների[4], վիկերի[5], վերականգնումը, որ Պիրմանի[4], Սմբրոլիո Դոնինի[6] և մի շարք այլ պնտնագիտական հետազօտութիւնների համաձայն, կանոնների երկրորդ դարից սկսած բազկացած է եղել արևելեան ծագում ունեցող վաճառականներից, այսինքն իրենց հետ ներկայացրել են Արևելքի վաճառականների՝ սաորների հայերի, յայների կորպորատիւ մխուրում-ներ, ոչ միայն հաւատում է հայերի Արևմուտքում լինելը և նրանց յարգանքը արևմտեան եկեղեցու կողմից, այլև ցոյց տալիս նրանց յատուկ օրինաչափութիւնը: Հետաքրքրական երևոյթի օրինաչափութիւնը: Հետաքրքրական երևոյթի օրինաչափութիւնը: Հետաքրքրական երևոյթի

չարժունութիւնն ու բազմազանութիւնը թոյլ է տալիս ֆրանսիական գրականութեան մէջ տարբերակել վարքերի զանազան տեսակներ՝ վարքեր ժողովրդին տիրող դասակարգի ճըն–չումից պաշտպանող սրբերի մասին· այդպի–սին էին սուրբ Աւիտը (Avitus), սուրբ Ժեր–մենը–Գերմանոս (Germanus), սուրբ Էլուան (Elvanus), մենակեացներին, անապատական–ներին փառաբանող վարքեր, օրինակ, Պուա–տիէի մերձակայ քարանձաւներում ապրող սուրբ Սենոչի (Senochius) կամ Աբդենի ան–տառակեաց սբ· Վալֆրուայի (Wulfilaicus) վարքերը:

Ուշագրաւ է վարքերի այն տեսակը, որի կենդրոնում Եւրոպայում քրիստոնէական ուսմունքը տարածող քարոզչի, ճգնաւորի կերպարն է: Վարքերի այս տարատեսակի մէջ են մտնում ինչպէս տեղական ծագում ունե–ցող սրբերի, այնպէս էլ արևելեան սրբերի վարքերը: Սա թոյլ է տալիս մշակուած, ընդ–հանուր կանոնի չրջանակում առանձնացնել հեաևեալ տրաֆարետային սխեման՝ սուրբը ծնուել է Արևելքում, ծագումով ասորի, հրեայ, յոյն կամ հայ է, ծնողները ազնուա–կան ծագում ունեն, Արևելքում, Ասորիքի և Եգիպտոսի անապատներում աստանդական կեանք վարելուց և Սուրբ Երկիր կատարած ուխտագնացութիւններից յետոյ, վերադիչեալ սուրբը ուղևորւում է դէպի Արևմուտք, բար–բարոսների մէջ քրիստոնէութիւն տարածե–լու: Այստեղ նա համբաւ է ձեռք բերում իր բարեպաշտ վարք ու բարքի չնորհիւ և մեռ–նելուց յետոյ դասւում սրբերի կարգը: Այդ սուրբը յարգւում է լատինական եկեղեցու կողմից, այն վանքերն ու եկեղեցիները, որ–տեղ նա եղել է, կոչւում են նրա անունով: Այդտեղ են դտնւում նրա հետ կապուած մասունքներն, ինչպէս նաև նրա պատուին կանդնեցուած արձանները:

Այսպէս օրինակ, 8–րդ դարի անանուն վարքի համաձայն, սուրբ Սերվատիոսը[7] (Ser–vatius) (անուան ֆրանսիական ձևն է սուրբ Servais) ծնուել է Հայաստանում և ծագու–մով հայ է: Ծագումով հայեր են Գրիգոր Դը Պիտիվիեն[8] (Gregorius Pitiveris), ծնուած 10–րդ դարի երկրորդ կէսին, սուրբ Սիմոն Դը Պոլիռոնը[9] (Simeon Padolironus) (+ 1016 թ·): Այս վերջինիս է նուիրուած նրան դրե–թէ ժամանակակից Պոլիռոնի բենեդիկտեան վանքի կուսակրօնի վարքը: Սբ· Դավինը[10] (Davinus Peregrinus), ըստ Լուկկայի կանո–նիկոսի ոչ ծաւալուն վարքի: Սուրբ Մակա–րիոսը[11] (Macarius) սրան նուիրուած է երկու վարք, առաջինը դրուել է 1017 թ·, հեղինա–կը Սեն Բովոն վանքի կուսակրօններից է, անձամբ ճանաչել է Մակարիոսին և ներկայ դտնուել նրա մահուանը: Երկրորդը դրուել է դտնուել նրա մահուանը: Երկրորդը դրուել է 1607 թ·: Սուրբ Ասպետը (Expeditus) որ մասնաւոր յարգանքի առարկայ է ֆրանսիայի աշխարհահռչակ ուխտավայրի մօտ գտնուող Pau քաղաքում, ինչպէս եւ Marseille, Lyon, Lille, Nantes, Blois, Paris, Neuille s.-Seine եւն·:

Այս վարքերը մենք յայտնաբերեցինք Բոլանդիստների կողմից հրատարակուած լատինական սրբաբանութիւնն ընդգրկող ACTA SANCTORUM–ից:

Վերոյիչեալ բոլոր սրբերը սերում են բարեպաշտ հայ ընտանիքներից: Սբ· Մակա–րիոս իշխանական ցեղից է· սբ· Սիմոնը զո–րապետի որդի է:

Սուրբի ծագման և հայրենիքի մասին պատմող նախաբանից յետոյ վարքագրու–թեան հեղինակները անցնում են նրանց կեանքի և գործունէութեան արևելեան շըր–ջանի նկարագրութեանը:

Ցիշատակուած վարքերի սուրբերը, Ասծուն աւելի անձնուէր ծառայելու ցան–կութիւնից մղուած, հրաժարւում են բազ–մաթիւ բարիքներից (սբ. Մակարիոս՝ Ան–տիոքի եպիսկոպոսական աթոռից, սբ. Սի–մոն եւ սբ. Դավին՝ իրենց ունեցուածքից) և ընտրում ճգնաւորական կեանքի ուղին: Մե–նակեցութեանը յաջորդում են արևելեան ճամբորդութիւնները, որոնց նպատակն է ճշմարիտ ուղու վրայ դնել անհաւատներին: Այս առաքելութիւնը իրագործելու համար

[7] A. S. T3, Mai 1780, Anvers: Սարուխան Ա· Բելգիա և հայերը, Վիեննա, 1937, էջ 237–243:

[8] Occident et Orient au X siècle, Notes du IX Congrès de la Société des historiens medievistes de l'enseignement superieur, Paris 1978, p. 127, AASS, Mars 11, pp. 463–464:

[9] Occ. et Or., p. 124—125; AS, Juillet IV, pp. 324—327; Աւգերեան Մ·, Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հ· Լի, էջ 342—344, Վիեննա, 1810—1815: Զամչեան Մ·, Ի պատմութիւն հայոց, հ· Բ, Վենետիկ, 1785, էջ 860—865:

[10] AASS, Juin 1, pp. 329—331.

[11] Occ. et Orient, pp. 129—130; AASS, Avril 1, pp. 875—876; Աւգերեան Մ·, Լիակատար վարք ... հ· ԺԻ, էջ 249—251: Զամչեան Մ·, Ի պատ–մութիւն հայոց, հ· ՀԲ, էջ 858:

նրանցից ոմանք սովորում են արաբերէն և եբրայերէն, ուղևորւում են Երուսաղէմ և քրիստոնէական հաւատքի բերում մեծ թուով հրեաների և մահմեդականների: Սրբերի քարոզչական գործունէութիւնը չի սահմա–նափակւում արևելեան երկրներով: Նրանք ուղևորւում են դէպի Արևմուտք, որպէսզի այստեղ էլ հեթանոսներին քրիստոնէութիւն քարոզեն: Միաժամանակ սրանք եւրոպացի–ներին ծանօթացնում են Արևելքի քրիստոն–եաների դրութեան, պատմում այլազուան–ների կոմիից նրանց կրած տանջանքների մա–սին:

Այս սրբերի չարժումը աչխարհագրական մեծ տարածք է ընդգրկում՝ Ֆրանսիա, Գեր–մանիա, Անգլիա, Իտալիա, Իսպանիա: Այս–տեղ՝ Եւրոպայում, կեանքի վերջում նրանք հանդրուան են դտնում վանքերում, որտեղ էլ և թաղւում են մեռնելուց յետոյ: Սրբերի գերեզմանը դառնում է ուխտագնացութեան վայր: Նրանց յիշատակը յարգելու և նրանց նչխարքների հրաչագործ զօրութիւնը տես–նելու են գալիս ոչ միայն սովորական մահ–կանացուները, այլև Ֆրանսիայի թագաւոր–ները՝ Կառոլոս Մարտելը Փիլիպ Առաջինը, Կառոլոս Մեծը:

Ծագումով հայ սրբերի գերեզմանը և նրանց պատուին կանդնեցուած եկեղեցիները այցելելու ասնդրպիը արմատաւորւում է ոչ միայն եւրոպացիների, այլև Արևմուտքում ապրող հայերի մէջ, որոնց համար այդ վայ–րերը դառնում են ազգային ինքնագիտակցու–թեան իւրատեսակ խորհրդանիշ:

Հայագիտութեան համար նման սրբաբա–նական յուշարձանները մեծ արժէք են ներ–կայացնում ինչպէս պատմական, այնպէս էլ դրական տեսակէտից:

Իրրև դրական տեղեկատուութիւն քրիս–նարկուող վարքերը հետաքրքրական են մի կողմից իրենց կրօնա–բարոյական և դիդակ–տիկ ուղղուածութեամբ վարքագրական կա–նոնին հետևելու տեսակէտից՝ քրիստոնէու–թեան ակտիւ քարոզ, աստանդական կեանք՝ այն տարածելու նպատակով, զրկանքներ, մարմնական տանջանքները և այլն, միւս կող–մից՝ սլուժեայնին կառուցուածքի ուղղուա–ծութեամբ: Վարքագրութեան սուրբ՝ արե–ւելքցին, չարժւում է դէպի արևմուտք՝ այս–տեղ սերմանելով նոր ուսմունքի սերմերը: Նրա թափառումների նպատակը քրիստոնէ–ական սրբավայրերին բարեպաշտ յարգանք մատուցելը չէ միայն, այլև ակտիւ քարոզ–չական գործունէութիւնը: Ֆրանսիական սրբաբանական գրականութեան մէջ կան մի սրբախօսական գրականութեան մէջ կան մի չարք վարքեր, որոնց հերոսը չարժւում է հակառակ ուղղութեամբ՝ Արևմուտքից դէպի Արևելք: Արևելք՝ մարզկութեան օրրանը, հեռաւոր մի երկիր, որտեղ ծագում է արևը, քրիստոնէութեան ուսմունքի հետ ձեռք է բերում առաւել յուզիչ իմաստ: Այն զու–գորդւում է սուրբ երկրի՝ Ցիսուս Քրիստո–սի ծննդավայրի հետ: Լքելով արևմտեան եր–կիրները, հեռանալով աչխարհիկ հրապոյր–ներից, դէպի Արևելք չարժելով, ուխտաւոր–ները ձգտում են մօտենալ սուրբ վայրերին, անցնել Հին ու Նոր կտակարանների սրբերի հետքերով: Ուխտագնացութեան և ճգնաւորի կեանք վարելու միջոցով Ասծուն մերձե–նալը պասիւ, անգործունեայ բնոյթ էր կրում: Բայց մեր կողմից ուսումնասիրուող վարքերի հերոսները, որոնք չարժւում են դէպի Արև–մուտք, աչքի են ընկնում իրենց ակտիւու–թեամբ:

Ասծուն ծառայելը արտայայտւում էր ոչ այնքան պասիւ, որքան ակտիւ քարոզչական գործունէութեան միջոցով:

Մեզ հետաքրքրող վարքերը, որպէս պատմական աղբիւրներ, պարունակում են արժէքաւոր փաստական նիւթ, որ հնարաւո–րութիւն է ընձեռում վերականգնել միջնա–դարում հայ–ֆրանսիական յարաբերութիւն–ների պատմութիւն և մասամբ լրացնել հայ ժողովրդի պատմութեան անյայտ էջերը: Այն–տեղ, այդ յուշարձաններում հետզհետէ առաջնային պլան են մղւում վարքագրական պատմական տարրերը՝ որոշ չափով ետ մղելով պատմա–կանը, նկատելի է հերոսների մէկ ընդհանուր տիպի՝ սուրբ, քրիստոնեայ ճգնաւորի կեր–պարը, հեռանալով աչխարհիկ հրապոյր–ներից, դէպի Արևելք չարժելով, ուխտաւոր–ները ձգտում են մօտենալ սուրբ վայրերին, անցնել Հին ու Նոր կտակարանների սրբերի հետքերով: Ուխտագնացութեան և ճգնաւորի կեանք վարելու միջոցով Ասծուն մերձե–նալը պասիւ, անգործունեայ բնոյթ էր կրում: Բայց մեր կողմից ուսումնասիրուող վարքերի հերոսները, որոնք չարժւում են դէպի Արև–մուտք, աչքի են ընկնում իրենց ակտիւու–թեամբ:

Ասծուն ծառայելը արտայայտւում էր ոչ այնքան պասիւ, որքան ակտիւ քարոզչական գործունէութեան միջոցով:

Մեզ հետաքրքրող վարքերը, որպէս պատմական աղբիւրներ, պարունակում են արժէքաւոր փաստական նիւթ, որ հնարաւո–րութիւն է ընձեռում վերականգնել միջնա–դարում հայ–ֆրանսիական յարաբերութիւն–ների պատմութիւն և մասամբ լրացնել հայ ժողովրդի պատմութեան անյայտ էջերը: Այն–տեղ, այդ յուշարձաններում հետզհետէ առաջնային պլան են մղւում վարքագրական պատմական տարրերը՝ որոշ չափով ետ մղելով պատմա–կանը, նկատելի է հերոսների մէկ ընդհանուր տիպի՝ սուրբ, քրիստոնեայ ճգնաւորի կեր–պարը, հեռանալով աչխարհիկ հրապոյր–ներից, դէպի Արևելք չարժելով, ուխտաւոր–ները ձգտում են մօտենալ սուրբ վայրերին, անցնել Հին ու Նոր կտակարանների սրբերի հետքերով: Ուխտագնացութեան և ճգնաւորի կեանք վարելու միջոցով Ասծուն մերձե–նալը պասիւ, անգործունեայ բնոյթ էր կրում: Բայց մեր կողմից ուսումնասիրուող վարքերի հերոսները, որոնք չարժւում են դէպի Արև–մուտք, աչքի են ընկնում իրենց ակտիւու–թեամբ:

Ասծուն ծառայելը արտայայտւում էր ոչ այնքան պասիւ, որքան ակտիւ քարոզչական գործունէութեան միջոցով:

Մեզ հետաքրքրող վարքերը, որպէս պատմական աղբիւրներ, պարունակում են արժէքաւոր փաստական նիւթ, որ հնարաւո–րութիւն է ընձեռում վերականգնել միջնա–դարում հայ–ֆրանսիական յարաբերութիւն–ների պատմութիւն և մասամբ լրացնել հայ ժողովրդի պատմութեան անյայտ էջերը: Այն–տեղ, այդ յուշարձաններում հետզհետէ առաջնային պլան են մղւում վարքագրական պատմական տարրերը՝ որոշ չափով ետ մղելով պատմա–կանը, նկատելի է հերոսների մէկ ընդհանուր տիպի՝ սուրբ, քրիստոնեայ ճգնաւորի կեր–պարը, հեռանալով աչխարհիկ հրապոյր–ներից, դէպի Արևելք չարժելով, ուխտաւոր–ները ձգտում են մօտենալ սուրբ վայրերին, անցնել Հին ու Նոր կտակարանների սրբերի հետքերով: Ուխտագնացութեան և ճգնաւորի կեանք վարելու միջոցով Ասծուն մերձե–նալը պասիւ, անգործունեայ բնոյթ էր կրում: Բայց մեր կողմից ուսումնասիրուող վարքերի հերոսները, որոնք չարժւում են դէպի Արև–մուտք, աչքի են ընկնում իրենց ակտիւու–թեամբ:

Ասծուն ծառայելը արտայայտւում էր ոչ այնքան պասիւ, որքան ակտիւ քարոզչական գործունէութեան միջոցով:

Մեզ հետաքրքրող վարքերը, որպէս պատմական աղբիւրներ, պարունակում են արժէքաւոր փաստական նիւթ, որ հնարաւո–րութիւն է ընձեռում վերականգնել միջնա–դարում հայ–ֆրանսիական յարաբերութիւն–ների պատմութիւն և մասամբ լրացնել հայ ժողովրդի պատմութեան անյայտ էջերը: Այն–տեղ, այդ յուշարձաններում հետզհետէ առաջնային պլան են մղւում վարքագրական պատմական տարրերը՝ որոշ չափով ետ մղելով պատմա–կանը, նկատելի է հերոսների մէկ ընդհանուր տիպի՝ սուրբ, քրիստոնեայ ճգնաւորի կեր–պարը, հեռանալով աչխարհիկ հրապոյր–ներից, դէպի Արևելք չարժելով, ուխտաւոր–ները ձգտում են մօտենալ սուրբ վայրերին, անցնել Հին ու Նոր կտակարանների սրբերի հետքերով: Ուխտագնացութեան և ճգնաւորի կեանք վարելու միջոցով Ասծուն մերձե–նալը պասիւ, անգործունեայ բնոյթ էր կրում: Բայց մեր կողմից ուսումնասիրուող վարքերի հերոսները, որոնք չարժւում են դէպի Արև–մուտք, աչքի են ընկնում իրենց ակտիւու–թեամբ:

© National Library of Armenia

եացքի և աշխարհակարգի մասին եղած պատկերացումների հետ:

«Մինչնաղարի մարդը, — գրում է Լիխաչովը, — ասես միշտ զգում է աշխարհի բոլոր կողմերը՝ արևելքը, արևմուտքը, հիւսիսը և հարաւը: Նա զգում է իր դիրքը նրանց նկատմամբ: Եկեղեցու բեմը նոյնպէս ուղղուած էր դէպի արևելք: Իր տան մէջ էլ նա սրբապատկերները կախում էր արևելեան անկիւնում: Նոյնիսկ մեռածին դերեզման էին իջեցնում դէմքով դէպի արևելք:

Աշխարհի երկրների դիրքին համապատասխան էին տեղադրուած դրախտը և դժոխքը: Դժոխքը արևմտքում էր, դրախտը՝ արևելքում: Պատմութիւնը նոյնպէս տեղաբաշխում էր ըստ աշխարհի երկրների· առջևում՝ արևելքում, աշխարհի սկիզբն էր ու դրախտը, եաևում՝ արևմուտքում՝ աշխարհի վերջը, նրա դալիքը և ահեղ դատաստանը: Պատմութեան չարժումն ընթանում է արևելքից դէպի արևմուտք: Աշխարհագրութիւնն ու պատմութիւնը համապատասխանում են իրար»[12]:

Մենք հակուած ենք վարքերի սիւժետային այդպիսի կառուցուածքի մէջ տեսնել միջնադարեան մարդու դիտակցութեան մէջ արմատաւորուած պատկերացումը աշխարհի մոդելի մասին, դոյութիւն ունեցող ամէն բան նախասկզբից, նախահիմքից բխեցնելու միտումը, այստեղից է սկսւում նաև աշխարհի կրօնական ըմբռնումը՝ Արևելքը դիւսում է իբրև քրիստոնէութեան օրրան: Ուստի Արևելքը նաև մեկնակէտ է, պատումի սկիզբը, իսկ արևելքի մարդը կոչուած է չարժուելու դէպի արևմուտք՝ այն փրկելու և սուրբ Արևելքին մերձեցնելու համար:

Արևելքը այստեղ այն ընդհանրական, հաւաքական կերպարն է, որի մէջ առանձին արևելեան երկիրները՝ Ասորիքը, Հայաստանը, Յունաստանը և այլն, առանձին բազադրիչ մասեր են: Հեռզհեռէ, անմիջական շփումների հեռանքով, վերջիններս առանձնանում են իրրև ինքնուրոյն միաւորներ: Ընդորում, առանձին արևելեան երկրների ընկալումը համամման է Արևելքի հաւաքական ընկալման՝ դա նոյն աշխարհակիզրն է՝ քրիստոնէութեան օրրանը:

Հայկական թեմայի ուսումնասիրութիւնը վազ միջնադարեան ֆրանսիական սրբախոսական դրականութեան մէջ (մենք կանդ առանք վարքագրութեան միայն մէկ տեսակի վրայ, հընդգրկելով ողջ հարուստ նիւթը և չքննեցինք այս տեսակէտից նոյնքան հետաքրքրիր ու կարևոր վկայաբանութեան ժանրը) թոյլ է տալիս աւելի համակողմանի և խորը վերլուծել այդ թեման պատմական աւելի ուշ չրջաններում: Հայկական թեման 11—14–րդ դարերի ֆրանսիական դրականութեան մէջ կրում է նախորդ չրջանի դրականութեան ազդեցութիւնը, իսկ հայ ազգային կերպարի ձևաւորումը սերտօրէն փոխկապակցուած է աւելի վազ չրջանում ձևաւորուած ազգային դիրքորոշումների և տեսլեսների հետ:

ԿԱՐԱԳԵՕԶԵԱՆ ԳՈՀԱՐ

[12] Լիխաչով Դ., Ռուս հին գրականութեան պոետիկա, Մոսկուա, 1979, էջ 343:

ԷՋԵՐ ՀԱՅ–ՀՆԴԿԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

1983–ի տարեմուտին սովետա–հնդկական պիտաժողովի էին հաւաքուել երկու երկրների ականաւոր Ֆիլիոլոգները: Գիտաժողովի տեղի էր ունենում Հայաստանի լեռներում Ծուարած Ծաղկաձորում: Երբ արդէն լսուել էին բոլոր զեկուցումները ու լի մի էին բերուել արդիւնքները, պիտաժողովի մասնակիցներն այցի գնացին Օրբելի եղբայրների թանգարանը, որը գտնուում է հենց այստեղ, հռչակուած պիտնական եղբայրների ծննդավայրում: Ցայտնի է, որ եղբայրներից մէկը Լեւոն Արզարի Օրբելին նշանաւոր Ֆիլիոլոգ էր, որի հռչակը դուրս է եկել մեր երկրի սահմաններից: Թանգարանի առենդներից մէկի մօտ էքսկուրսավարը հիւրերին ցոյց տուեց Լեւոն Օրբելու լուսանկարը իր մի խումբ աշակերտների հետ, որոնցից մէկը Հնդկաստանից էր: Յաւոք, թանգարանի աշխատակիցներին յայտնի չէր նրա ազգանունը եւ հետագայ ճակատագիրը: Եւ այդտեղ պարզուեց, որ տարիներ առաջ Օրբելուն աշակերտած հնդիկ Ֆիլիոլոգը այժմ աշխատում է Հնդկաստանի գիտական կենտրոններից մէկում եւ յայտնի անուն է հնդիկ գիտնականների չրջանում . . .

Այսպէս ահա, մի անդամայն պատահականօրէն գրուեց եւս մի քանի տող Արեւելքի երկու հնագոյն ժողովուրդների՝ հայերի եւ հնդիկների հին աւուրց բարեկամութիւնն արձանագրող մատեանում, բարեկամութիւն, որ իր սկիզբն առնում է ալեհեր դարերի խորքից: Այդ մասին ուշագրաւ տեղեկութիւններ կան յոյն պատմիչներ՝ Քսենոֆոնի (5–4–րդ դար մ· թ· ա·), Պրոկոպիոսի (6–րդ դար), հայ պատմիչներից՝ Մովսէս Խորենացու, Ագաթանգեղոսի (5–րդ դար), Չնորհալու (13–րդ դար) եւ այլոց գործերում:

Հայ–հնդկական յարաբերութիւնների աչքառու սկսուել է մ· թ· ա· 4–րդ դարի երեսնական թուականներից, երբ Ալեքսանդր Մակեդոնացին, նուաճելով Արեւելքը, ստեղծեց հսկայածաւալ կայսրութիւն: Դրա հնոր հիւ համաչխարհային առեւտրի ոլորտն ընդգրկուեցին Պարսկաստանը, Հնդկաստանը, Միջին Ասիան: Հայաստանը մտաւ տարանցիկ առեւտրի ցանցի մէջ:

Հնդկաստանից Հայաստան էին ներմուծւում գլխաւորապէս թանկագին քարեր, գեղանիւթեր, որոնց անուանումներին յաճախ կարելի է հանդիպել հայկական հին եւ միջնադարեան բժշկարաններում: Հայերը Հնդկաստան էին արտահանում մանուածրա–պէս գունաւոր կաչիներ ու զանազան ներկեր: Ամբողջ Հնդկաստանում հանրայայտ էին հայկական մուգ կարմիր եւ որդան կարմիր ներկերը:

Հայ–հնդկական կապերի հնագոյն ժամանակաշրջանը պարունակում է ականամանակաշրջանը պարունակում է ականատեսների բազմաթիւ վկայութիւններ, որոնք կոնկրետ փաստեր են ածանգրել երկու ժողովուրդների հնամեայ բարեկամութեան մասին: Նոր չրջանը՝ 16–17–րդ դ· դ·, ընդգրկում է հայ գաղթավայրերի պատմութիւնը, հնդկահայերի քաղաքական, տնտեսական, մշակութային կեանքը: Այս չրջանում հնդիկների երկրում ապաստան գտած հայերը առեւտրական կապերի մէջ էին չափ երկրների հետ եւ զգալի դեր էին խաղում ժամանակի միջազգային չուկայում: «Հայերը, այս ճարպիկ ճանապարհորդ առեւտրականները, — գրում է ուսումնասիրողներից մէկը, — լաստանաւերով Տիգրիսի վրայով հնդկական ապրանքները եւ մեռաքը հասցնում էին մինչեւ հիւսիս, նրանց քարավանները հասնում էին մինչեւ Դոն . . .»:

Հնդկաստանի հայ գաղթօջախների եւ հայ–հնդկական համագործակցութեան մասին արժէքաւոր փաստեր է պարունակում Թովմաս Խոջամալեանի «Պատմութիւն հընդկաց» աշխատութիւնը, որը գրուած է Հընդկաստանի տիրակալ Շահ Ալեմի արքայական դրադարանի եւ դիւանատան պատմական փաստաթղթերի հիման վրայ եւ լոյս է տեսել 1848–ին, Կալկաթայում: Պատմական մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում նաեւ Մ. Թաղիպեանի, Ա. Ալպոյաճեանի, Մ. Սեթեանի՝ հնդկաստանին եւ հնդկահայերին

© National Library of Armenia